

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Ներկայումս 1887 թիւն

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպրիետարով: Մերը ստանում ենք սեփական
ՀԵՌԱՅԻՆՆԵՐԻ:
«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿԻ» կարելի է ՍՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների մե-
կիւնում, Թամարիայի տանը):
Կայսերական ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թատրոնի և զեղարուեստի կոչումը.— ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Արապելայից. Նամակ Ղու-
բայից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Կրկին Աստուր-Ունգարիայի ներքին յուզումները
մասին. Տեղեկութիւններ թիւրքաց Հայաստանից.
Արտաքին լուրեր.— ԽԱՆՆԻ ԼՈՒԻՍԻ.— ՀԵՌԱՅԻՆՆԵՐԻ.
— ԲՈՐՍԱ.— ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԻ.

ԹԱՏՐՈՆԻ ԵՒ ԳԵՂԱՐՈՒՆՈՒՄԻ ԿՈՇՈՒՄԸ

Կիրակի օրից սկսած մեզ մօտ հիւր է
ուսուցող յայտնի գերասանուհի տիկին Սա-
վինա: Մեր քաղաքային թատրոնը ամեն ե-
րեկոյ կատարելագոյն լի է լինում. ամենքը
շտապում են տեսնել ու վայելել հոգեկա-
նոր դերասանուհու խաղը:
Բայց մինչև այժմ ի՞նչ րեպերտուար է
տուել մեզ երեկոյի դերասանուհին.— Եւրո-
պական թատրոնական ընկերութեանը մի
քանի փոխադրված պիէսներ, կամ այն-
պիսի մի պիէս, ինչպէս Շպաֆինսկու
„Майора“ պիէսն:
Առհասարակ մենք թատրոնի մէջ ընդու-
նում ենք երկու նպատակներից մէկը. կամ
թատրոնը պէտք է մեզ զուարճացնի, կամ
պէտք է մեզ մտածել տայ, բա-
րոյականացնի, ուսուցանի մեզ:

Շպաֆինսկու պիէսն պատկանում է
ուսուցող բեմական և զեղարուեստական այն
նոր դպրոցին, որ վերադառնալով յատկութիւն-
ներից ոչ միայն ստեղծելու ճշտութեամբ է կա-
րելի, ոչ չարիքի, ստատմանը դրամայի խաղին
ներկայ գտնվում, բայց և մի օր և է բան
ուսանել նոյնպէս է կարելի րէալական
այն նոր զեղարուեստական դպրոցից, որ
բնականութիւնը տեսնում է ոչ թէ հա-
սարակութեան մէջ եղած բնական տի-
պերի նկարագրելու մէջ, այլ արտակարգ
բացառական, հիւանդոտ տիպերի նկարա-
գրութեան մէջ: Բնական տիպերը, որոնք կա-
րող են և այլանդակ լինել, այնու ամենայ-
նիւ հետեւանք են հասարակական այս կամ
այն կազմակերպութեան և դրանք միշտ
կարող են և պէտք է լինեն զեղարուեստի
ուսուցանարարութեան առարկայ: Բայց ան-
բնական, հիւանդոտ, հոգեպէս տկար անձ-
նաւորութիւնները ներկայացնում են մեզ
երեւոյթներ, որոնք ոչ թէ հասարակական
այս կամ այն կազմակերպութեան հետեւանք
են, այլ անձնական անբնական հոգեկան զը-
րութեան և այդ վերջինների զեղարուեստը
է կարող իր ուսուցանարարութեան առար-
կայ դարձնել, այլ դրանք կարող են միմյան
պիտիւնատր-բժշկի ուսուցանարարութեան ա-
ռարկայ դառնալ: Գեղարուեստը, որքան էլ
բնական լինի, դրո՞ւ ունի բնական հո-
գեկան (պիտիւնատրիկան) երեւոյթների հետ և
ոչ թէ հիւանդոտ, անբնական-հոգեկան
(պիտիւնատրիկան) երեւոյթների հետ և
եթէ նոյն իսկ ընդունենք որ բնականոր

կարող է նկարագրել հոգեպէս տկար, ան-
բնական հասարակական տիպերը, այդ տե-
սակ տիպերը դարձնալ հետեւանք պէտք է
լինեն հասարակութեան սխալ և վատ
կազմակերպութեան, բայց բնական հոգե-
կանը դրո՞ւ է կարող ունենալ այնպիսի
անձնաւորութիւնների հետ և նրանց իր
ստեղծագործութիւնների առարկայ, հերոս-
ներ դարձնել որոնք անձնական, բուն ան-
հասարակական պատճառներից հոգեպէս տկար,
անբնական, անբարոյական են:

Մի կին որ անբարոյական է, ոչ թէ այն
պատճառով, որ հասարակական հանգա-
մանքներն են ստիպել նրան անբարոյական
դառնալ, այլ մի օր և է անհասարակական սե-
ռական տկարութեան պատճառով, կամ ու-
ղեղի տկարութեան պատճառով.— այդ տե-
սակ կինն է կարող որպէս առարկայ ծա-
ռայել գործի զեղարուեստական հեղինա-
կութեան մէջ մի տիպ ստեղծելու համար:

Նկարելը կարող է իր վրձնով ներկա-
յացնել մի երկրի աւազակի տիպի պատկե-
րը, ընդունելով որ աւազակութիւնը երկրի
հասարակական տկար կազմակերպութեան
հետեւանք է և աւազակի մի տիպ է այդ
երկրի մէջ: Բայց նկարչի գործը է նկարել
մի շէլ մարդու պատկերը, կամ մի մարդու
պատկերը, որի երեսի վրա երևում են մի
օր և է տկարութիւնից ստացած վէրքեր,
կամ մի մարդու դէմքը, որ կորցրել է իր
բիծը: Դրանք բուն անձնական երեւոյթներ
են և չունեն մեզ համար ընդհանուր հա-
սարակական հետաքրքրութիւն, ուրեմն և
նկարչի վրձնի առարկայ չեն կարող լինել:
Այս երեւոյթների հետ գործ ունենալ ոչ
զեղարուեստը, ոչ մամուլը, ոչ էլ կրիտի-
կան.— սրանց հետ գործ ունի բժշկական
նութիւնը:

Բայց ուսուցող նոր, վերջին տարիների
բնական գրական դպրոցից, այդ ուղղու-
թիւնը ամենեւին ինքնուրոյն, ուսուցական
չէ, այլ նա էլ հետեւողութիւն է և եւրոպա-
կան գրականութեան վերջին ժամանակների
սխալ ուղղութիւն: Այդ է պատճառը, որ
այնպիսի անձնուհի Ֆրանսիական րօմաններ,
ինչպէս „L'affaire Clémenceau“ կամ „La
comtesse de Chalis“ պիտիւնատրիայի
(հոգեկան տկարութիւնների ուսուցանար-
արութեան և բժշկութեան) առարկայ կա-
րող են համարվել, բայց ոչ թէ սովորական
հոգեկան, բնական հասարակական երեւոյթ-
ների քննութեան առարկայ:

Յայտնի է արդէն, և այդ ապացուցել է
հաստատապէս հոգեկան բժշկականութիւ-
նը, որ իւրաքանչիւր յանձնարար հոգեպէս
տկար մարդ է: Եւ գուցէ ժամանակով
մարդկութիւնը այնտեղ կը հասնի որ օ-
րէնքը այլ ևս չի պատժի յանցանքներին,
այլ կը յանձնի նրանց դժանդիները: Բայց
եթէ մարդը հեռուցեալ յանցանքից է դառ-
նում, իսկ կինը անբարոյական է դառնում,
որովհետեւ հասարակական սխալ, վնասա-
կար և անարդար կազմակերպութիւնը է
մղում այդ մարդուն և այդ կնոջը դէպի

յանցանքն ու անբարոյականութիւնը.— այդ
տեսակ երեւոյթներ կարող են և պէտք է
դառնան գրականութեան, բեմի, կրիտիկայի
ուսուցանարարութեան առարկայ: Իսկ եթէ
մարդը յանցանք է անձնական կամ ժա-
ռանգական վատ հակումների պատճառով,
կինը անբարոյական է անձնական, ֆիզի-
կական, բուն սեռական հակումների, կամ
ուղեղի տկարութեան պատճառով.— այդ
տեսակ երեւոյթներ չեն կարող զեղարուես-
տի ուղղութեան, զբաղմունքի և ուսում-
նասիրութեան առարկայ լինել:

Մի կին որ խելագարվում է մի օր և է
բարձր հասարակական գաղափարին, սիրոյ
խոր զգացմունքին ձգտելով և այդ բար-
ձր բարոյականացնող զգացմունքներին չը
հասնելով՝ ընկճվում, կործանվում, խելա-
գարվում է.— այդ կարող է ներկայացրած
լինել րօմանի, մէյսի, պօէմայի մէջ, բեմի
վրա: Բայց ասեցէք ինչդրեմ, դա ի՞նչ զե-
ղարուեստի նիւթ է, և ի՞նչ կայ դրա մէջ
ուսանելի, ինչ կայ դրա մէջ ուսուցանար-
րութեան արժանի, եթէ մի կին, ինչպէս
Գիւմայի Ի զա Կլէմանս, կամ Շպաֆին-
սկու „Майора“ պիէսայի Ֆեն Ի յան
վնասած երեւոյթութեան, անսանձ կամա-
յականութեան, կամ սեռական հիւանդոտ
անսանձ հակումների պատճառով սիրահա-
րեցնում է իր վրա աննպատակ կերպով
բոյր չըջապատող տղամարդկանց և բոյո-
րին կործանում, նոյն իսկ փողի հաշիւն
էլ աչքի առաջ չունենալով...:

Դրանք արդէն հոգեբանական, բնական
հոգեկան երեւոյթներ են, — այլ հոգեկան
տկար երեւոյթներ են, հոգեպատկերի երե-
ւոյթներ են, որոնք կարող են ոչ թէ զոր-
ղի, այլ պիտիւնատր-բժշկի ուսուցանարարու-
թեան և բժշկութեան...:

Երբ որ թատրոնը և զեղարուեստը ծա-
ռայում են իրանց բուն նպատակին՝ տալ
հասարակութեան զեղարուեստական կեր-
պարանքով մի հասարակական խնդիր լուծե-
լու, — թատրոնը և զեղարուեստը դառնում
են մարդկութեան առաջադիմութեան գոր-
ծիչներ, պրօգրէսի ֆակտորներ: Բայց երբ
որ նրանք չեղելով են իրանց բուն նը-
պատակից, — նրանք այլ ևս չեն կարող ծա-
ռայել իրանց իսկական կոչմանը և դուրս
գալով հասարակական սովորական կենսաբից,
մտնում են արդէն իրանց համար օտար
չըջանի մէջ՝ մարդուն հոգեկան տկարու-
թիւնների շրջանի ուսուցանարարութեան մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՆՍԼՅՈՒՑԻՑ

Մայիսի 3-ին

Ներկայ տարվայ «Մշակի» 33 համարում Ա-
խաղայի թղթակցութեան մէջ ի միջի այլոց
նկատված էր, թէ լուսնը քաղաքային ինքնապա-
րութիւն, որ միայն պարծնում է անունով, իսկ
անցեալ տարվայ համարներից միում կային և
հետեւալ տողերը.— «ստանձնում եմ պարտա-
կանութիւն քննել վարչութեան իրաւասունքի մէջ
եղած ստանձնութեան պատճառները»: Շտապում
եմ կատարել այդ պարտաւորութիւնը:

Վերջին քառամսակի ընտրութեան միջոցին թէ
ինչ դերը խաղացին կուսակցութիւնները իրանց
կիրքը առաջ տանելու համար, այդ կրկնելու աւե-
րորդ է. հետեւանք այն եղաւ, որ Լրեսոսի սիրա-
հայրները հասան իրանց նպատակին: Նորընտիր
իրաւասունքները սկզբում ամենայն եռանդով ջանք
էին անում տանեակ տարիների գրուած և խճճե-
ված քաղաքային գործերը կարգի բերելու.— թէ
իրանց խճի պարտքը կատարելու և թէ ընտրող-
ների վստահութիւնը արդարացնելու համար: Մի
քանի նիստերից յետոյ զգալին, որ իրանց ներ-
կայութիւնը աւելորդ է, որովհետեւ վարչութիւնը
իր քառամսակեանք անում էր միայն այն, ինչ

որ ինքը կամենում էր, իսկ դուռնայի որոշումները
ծաղկաբաղ անելով, մեծ մասը դնում էր «մի-
նարի տակ»: Հետեւանք այն եղաւ, որ այսօր ի-
րաւասունքներից շատերը արհամարհանքով խորշում
են յիշել մինչև անգամ վարչութեան անունը:
Ահա ապացոյցները.— Դուռնայի որոշում է, ինքնա-
պարտութեան դրութիւն ունենալից մինչև այժմ,
տանեակ տարիների ելումուկան հաշիւները ըն-
նելու համար ընտրել մասնագիտով: Անցնում են
ամիսներ, տարիներ, իսկ վարչութիւնը նիստ չէ
նշանակում այդ հարցի մասին. կրկնվում է նոյնը
բերանացի և թէ գրաւոր. վարչութիւնը լուծում է.
իսկ մասնագոր կերպով պատասխանում է թէ
հերթակալ հարցեր շատ ունենք, և մինչև այժմ
էլ հերթակալ հարցերից դուրս չէ ձգված այդ օ-
րինաւոր պահանջը:

Իրաւասունքներից մինը առաջարկում է մաքու-
թեան հարցի վերաբերութեամբ ծրագիր՝ զոցելու
արտաքննողների խողովակները, որոնք ուղղված
են Մարտադայի վրա. այդպիսի գրաւոր առաջար-
կութիւնները պահվում են ամիսներ առանց ներ-
կայացնելու դուռնային: Ո՞վ կարող է ենթադրել,
թէ այդ լուծութեան մէջ ևս չը կան շահախնդրա-
կան դադանքներ:

Ժողովրդագրական ծախսի համար դուռնայի ո-
րոշում է 500 ռուբլի. երբ կօմիսիան քննում է
եկեղեցի նախահաշիւը, գտնում է, որ վարչութիւ-
նը ապօրինի կերպով ընծայել է 100 ռուբլի իր
գործաւարին. (գործաւարը ունի պաշտպաններ
վարչութեան մէջ և է դուռնայի քարտուղար, ստա-
նալով կրկնակի ուժի): Մասնագիտով այդ մա-
սին նկատում է իր զեկուցումի մէջ: Նիստում պ.
քաղաքագլուխը պատասխանում է.— որ դուռնայի
յանձնելով վարչութեան իրաւունքին, վերջինը
ինչպէս և կամեցել է, այնպէս էլ կարողորդել է,
ուրեմն աւելորդ է այդ մասին նկատողութիւն ա-
նելը:

Տարիներով առաջ դուռնայի ընտրել էր մասնա-
գիտով քաղաքի անշարժ կալուածները գնահա-
տելու համար. վարչութիւնը ձգձգում էր գործի
սկսելը: Վերջապէս անցեալ տարի մասնագիտովի
նախագահ.— վարչութեան անդամ պ. Նահապե-
տեանը մի յայտարարութիւն է տալիս դուռնային,
որ ինքը ուսուցանի երեւոյթ անտեղեակ լինելով
չէ կարող նախագահել: Այդ յայտարարութիւնը
ծիծաղ յարուցեց նիստում և դուռնայի նորից յանձ-
նեց վարչութեան տնօրէնութեանը: Անցնում են
մի քանի ամիսներ ևս և ահա նոյն նախագահը
մարտ ամսին ներկայացնում է դուռնային զեկ-
տեմեր ամսում կայացած մասնագիտովի որոշու-
մը, թէ ցրտերի պատճառով գործը սկսվում են
գարնան սկզբից: Ինչ անուն տալ այդպիսի կա-
տակներին: Դուռնայի որոշեց յարգել պ. նախագա-
հի առաջարկութիւնը, և որովհետեւ արդէն գա-
րունը սկսված է, ուստի խնդրել պ. նախագահից
անյապաղ ձեռնարկել գործին: Մայիսի մէկից
մասնագիտով մի փոքրիկ մեջոն արեց և երկու
օր է կրկին հանգիստ է առած: Ուրեմն երկու
կամ երեք ամսայ գործը երեք տարիներ ևս պի-
տի տեւէ:

Վերջապէս հազարաւոր փաստեր և դէպքեր
կան, որոնց մի առ մի յիշելուն արգելք են լի-
նում լրագրական նեղ սիւնակները. առ այժմ բա-
ւականանանք հետեւալ դէպքով: Չորս թէ հինգ
անգամ մի և նոյն երկու հարցերի վերաբերու-
թեամբ հրաւիրվում են իրաւասունքներ նիստի—
բայց այդ հարցերը յետաձգվում են զանազան
պատճառներով: Անցեալ ապրիլի 30-ին նոյնպէս
հրաւիրված էին իրաւասունքները՝ Հարցերը բա-
ժանված էին երկու կարգի: Երկրորդ կարգի հար-
ցերի մասին զրկւած էր առանձին ծանօթու-
թիւն հրաւիրվելով թէ, այս երկրորդ կարգի
հարցերը վճռվում են ամենայն դէպքում, որքան
և լինի ներկայացած իրաւասունքների թիւը: Հա-
ւաքված էին 13 իրաւասունքներ. նիստը էլ բաց-
վում. իրաւասունքներից մին խնդրում է նախագա-
հից բանալ նիստը երկրորդ կարգի հարցերի վե-
րաբերութեամբ: Նախագահը մերժում է իրաւա-
սուն կրկնում է իր խնդրը, հիմնված հրաւիրա-

թերթի ծանօթութեան վրա, բոլորովին օրինաւոր համարելով մի քանի անգամ յետաձգված երկրորդ կարգի հարցերը քննութեան ենթարկել: Նախագահը յամառում է խնդրում է նոյն իրաւասուն արձանագրութիւն կազմել, որ իր առաջարկութիւնը մերժում է ապօրինի կերպով Նախագահը վեր է առնում իր գլխարկը և հեռանում դահլիճից: Մի քանի իրաւասուններ միասին առաջարկում են վարչութեան անդամին, որ թող տայ իրանց արձանագրութիւն կազմելու, արդարացին իրանց բողոքը: Պ. Հայրապետեանը (վարչութեան անդամ) հրամայում է ծառայողներին հանգցնել ճրագները և պատասխանում, որ ոչ ոք իրաւունք չունի բողոք յայտնելու և հրապարակել է հետեւեալ դահլիճից: Եղբակցացութիւնը ընթերցողներին ենթ թողնում:

Իրաւասու:

ՆԱԽԱԳ ԳՈՒԲԱՅԻՑ

Մայիսի 9-ին

Տորոնի հարցը բարձրացել է և կենդանութիւն ստացել: Զբոսնորք մեծամասնութիւնը, որ զինգրում բացառապէս վաճառականութեամբ էր պարագայում, այժմ թողել է այդ պարագայունքը և մեծ աշխատութեամբ տորոն է քանդում: Առնում են տորոնը հողի տակ համարեա թէ չնչին գնով, իրանք մշակում են, իրանք քանդում, իրանք մաքրում, չորացնում են և ծախում: Համաժողովրդային մեծ օգուտներ են վերցնում: Այստեղ զննատուր է այժմ տորոնը 1 ր. 80 կ. մինչև 2 րուբլի: Մեծ տորոնատերէրը չեն ծախում հողի տակ տորոնը, նրանք հիմա իրանք են աշխատում, ջրում և կան մի քանիսն, որ այս տարվանից սկսել են քանդել: Պահանջներ լինում են Մարտէլից և Պարսկաստանից: Մարտէլ ուղարկվում է տորոն առանձին պայմանագրերով, որոնց հիման վրա այստեղ մի քանի հայ վաճառականներ ձեռնարկել են այդ առևտուրը, սկզբից Բագու ուղարկելով տորոնը, այստեղ էլ կայ գործակաւար, որը ուղարկված է տորոն առնելու և հաւաքելու նպատակով: Անձամբ կարգացի Մարտէլից ուղարկած մի հայ վաճառականի գրասենեակում ծառայող գործակաւարի նամակը, որ նա գրած էր Թիֆլիս Այդ նամակից, որ ինձ յայտնվեցաւ կարգաւ, քաղում եմ հետեւեալ տեղեկութիւնները: «Վերջին ամիսներում եկաւ այստեղ Բաթումից Գերբեյի տորոն մօտ 1400 քաակ և վաճառակ սկսած 42 ֆրանկից մինչև 47 1/2 ֆրանկ 100 կիլօն, վերջին անգամ ինձ առաջարկեց առնողներից մէկը 50,000 կիլօն. ես գրեցի բարեկամներիցս մէկին, բայց նա չը կարողացաւ առնել, պատասխանելով որ չը կայ: Առաջ չէին առնում Կովկասի տորոնը նախ նրա համար, որ քրէնը թանկ էր նստում, երկրորդ՝ այստեղ ես տորոնի մեծ ցանք և բերք կար. երբ յանկարծ ուրիշ ընտիր գոյներ դուրս եկան, տորոնի գները վերին աստիճանի պակասեցին, այն ժամանակ ձեռք վերառան երկրագործները և հողերը ուրիշ քանի համար գործածեցին: Յաւախն այն է, որ զրկած տորոնի մի քանի պարտիաների մէջ հող էին խաւանել, որը մեծ դժուարութիւններ առաջ բերեց ծախելու ժամանակ: Դարձնում ենք մեր տորոնատերերի ուշադրութիւնը այդ երևոյթի վրա, այդպիսի խարդախութիւնները հետեւեալը վատ կարող է լինել:»

Տորոնը ուղարկվում է և Պարսկաստանի Նազա քաղաքը: Այստեղ աւելի է ծախվում մաղված տորոնը: Բացառապէս պարսիկներն են ուղարկում այստեղից իրանց հայրենիքը: Մի պարսիկ մի տարվայ մէջ դուռ արդիւնք վերցրել է եօթը հազար ռուբլի:

Տորոնը շարունակում են առնել: Մի տարվայ ընթացքում մօտ 50,000 րուբլի փող է մտել մեր քաղաքը և արտահանվել է այստեղից մինչև 100,000 պուլը: Տորոնը Տորոնը ուղարկում են ուղիղ Բաթում: Գինը տորոնի այժմ 50—55 կօպ. է պուլը. ցանքները խոտաւում են առատ հոնձը: Ապրիլը անցաւ անձրևային և ցուրտ, իսկ մայիսին սկսել են և անձրևներ և տաք օրեր:

Վաճառականութիւնը ընդհանրապէս ընկել է այստեղ:

Մ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Այս օրերս կովկասեան կառավարչապետի օգնական գնեհրալ Շ եր և մ է տ ի և վ իր ամուս-

նու հետ ուղևորվել է Թիֆլիսից դէպի Ռուսաստան:

ԱՅՈՒՔԱՆԱԳԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Որքան այժմ ուսումնարանները մեր քաղաքում բարեկարգ դրութեան մէջ են, այնքան քաղաքի միակ ընթերցարանը անկարգ դրութեան է հասցրած: Ընթերցարանը օրվայ մեծ մասը փակ է, այցելողները գալիս են, բայց գրեթէ երբէք չեն կարող լրագրել կամ գիրք ստանալ և դատարկաձեռն տուն են վերադառնում: Ընթերցարանը չունի գրադարանապետ, այլ այդ պաշտօնը ծառան է վարում: Այդ անկանոն վիճակը շատերին տեղիք է տալիս հրաժարվելու անդամութիւնից ու գրադարանն այցելելուց. դրա հետեւեալն էլ այն է լինում, որ ինքն հիմնարկութիւնն էլ նիւթապէս մնաւում է: Մի տարուց աւելի է, որ ընթերցարանի հիմնադիր անդամները ժողով չեն կայացրել, նրանցից մեծ մասը քաղաքից հեռու լինելով կարծես թէ չէր կարելի որ բացակայ անդամները քաղաքում մնացողներին իրանց ձայնի իրաւունքը տային, որպէս զի ժողովը կայանալ կարողանար: Յաւախ է որ 600 տուն ունեցող հայաբնակ գաւառական քաղաքը մի ընթերցարան էլ պահէ չէ կարող: Աւելի լաւ չէր լինէր թէ մեր տիկիները, փոխանակ օրվայ մեծ մասը տանը անդործ նստելու ու բարձրագոյններով զբաղվելու և մեր երիտասարդներն էլ փոխանակ ամբողջ օրերը անգործութեամբ անցկացնելու, նուիրելին օրվայ մի երկու ժամ ընթերցարանին զբոսնելու կարգաւ: Իրանց մտաւոր պաշարը հարստացնելով:»

Մայիս ամիսը Թիֆլիսում այս տարի շատ լաւ է անցնում: Գրեթէ ամեն երեկոյ անձրեւ է գալիս, այնպէս որ ցերեկից չք չէ անում և թող չը կայ այժմ Բաղաբի ոսկաւթի աղբիւրի բուսականութիւնը, սովորականին հակառակ, այս ամիսը շատ կանաչ և թարմ է պահպանվում:

ՄԵՂԻՑ ԳԻՒԼԻՑ մեզ գրում են: «Թէպէտ շատ տարիների փորձից յետոյ մեր հասարակութիւնը վերջապէս հասաւ այն համազման, որ շերամի իւտակայան տեսակի սերմի պահելը աւելի ձեռնառու է, քան ուրիշ տեսակի սերմերը և այս տարի շերամակայանների մեծամասնութիւնը այդ տեսակ տարի սերմում և այստեղից ընդհանրապէս Նիւտոնեան եղբայրներից, սակայն չէ կարելի դուռ ևս երաշխաւորել իտալական սերմից լաւ արդիւնքի ստացման մասին, քանի որ այս տարվայ խիտ եղանակի պատճառով և ապրիլ ամսի 19-ից մինչև 26 անընդհատաբար անձրևելուց և սարերի վրա ձիւնի գալուց՝ այնպիսի սաստիկ ցրտեր եղան, որ թիթենիների տերևները դեղնեցան ու դուռնաւորացան:»

Մեզ գրում են Մեղրի գիւղից, որ այդտեղ ցորենի պուլը արժէ այժմ 1 րուբլի 20 կօպէկ: Գիւղում տիրում է փողի պակասութիւնը, որի պատճառով շատերի գրութիւնը աննախանձելի է:

Մեղրից մեզ գրում են: «Գիւռ անցեալ մարտ ամսի 20-ին մի անդրեցի սպանել էր իր մի համազգիւղացու Ռայց մինչև այժմ գործը դուռ չէ ենթարկվել ոչ զինուորի, ոչ էլ բժշկի քննութեանը: Եւ ահա եղեռնագործը մօտ օրերում ինքն դնում յանձնում է իրան Մեղրի չրջանի ոստիկանին, խոտորվանելով իր յանցանքը:»

ԲԱԳՈՒՅԻՑ մեզ ուղարկված է հետեւեալ նկատողութիւնը: «Չորս լրագրի առաջնորդը յօդուածները տեսնում ենք, որ առանց ազդեցութեան չեն մնում, մեր կապիտալիստները սկսել են ոչ թէ միայն իրանց օգուտները վրա մտածել, գործարաններ բանալով, բայց և հողաւ իրանց գործարանների առողջութեան մասին ևս: Այցիւրելով պ.պ. Կովկասեանցի և Արգարովի ծխախոտի գործարանը, համոզվեցայ որ այդ գործարանի մէջ բանուորները ուրիշ գործարանների նման մեթ է խոնաւ ներքնայարկում չեն բանում, այլ տան երկրորդ յարկում դեղնեղած լայն, ընդարձակ և լուսաւոր սենեակներում: Այդ սենեակները ունեն փայտեայ յատուկ և պատերը ներկած են, տուներ քաղաքի լաւ տեղումն է դնուլում: Բայց այստեղ գործարանները մեծ մասամբ նաւթային գործարաններում գործ գտնելով, ուրիշ արդիւնաբերութեան մէջ զգացվում է աշխատող ձեռքերի

պակասութիւնը, այդ պատճառով բանուորները վարձը բաւական մեծ է Բագուի մէջ: Նախորդ տարի բանուորներ շատ կան ուրիշ քաղաքներում, ինչպէս Թիֆլիս, Շուշի և այլն, շատ անգամ այդ քաղաքներում նրանք նոյն իսկ պարսպ են մնում, իսկ այստեղ լաւ բանուորների մէջ պակասութիւն է զգացվում և նրանց այստեղ բաւական թանկ են վճարում:»

Մարտ ամսի 7-ին, ներկայ թւի, վախճանվեցաւ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ մի ռուս յայտնի կին-հեղինակ, Սօֆիա Միխայլօւնա Լօբսկայա, 36 տարեկան հասակում: Չը նայելով որ այս տաղանդաւոր կինը անդադար գրում էր և գլխաւորապէս մանուկների համար, տպագրելով մանկավարժական գրուածները «Игрушечка» և «Задумчивое Слово» մանկավարժական ամսագիրներում, աւելի ծանր յօդուածներն էլ տպելով «Русское Богатство» և «Всемирная Иллюстрация» հրատարակութիւնների մէջ, — տիկին Լօբսկայա, այնու ամենայնիւ հազիւ կարողանում էր իր այդ անընդհատ աշխատութիւններով հայթայթել իր ապրուստը և մեռաւ վերջին չքաւորութեան մէջ, ուսման կարծում էր յուսահատութիւնից նոյն իսկ անձնասպանութիւն գործելով: Այդպէս են վարձատրվում մեղանում, հեղինակի, այն էլ մանկավարժ հեղինակի օգուտէտ գրական աշխատութիւնները:

Խաղաղութիւն համալսարանի պրօֆէսոր, բժշկապետ Ա. Շ լ թ ե ա ն ինդրում է մեզ յայտնել, որ այս ամառը նա մտադիր է դնալ Պիտագորսկ և այդտեղի մօտակայ հանքային ջրերը, այդտեղ բժշկական պրակտիկայով պարագելու: Մայիսի 22-ից պրօֆէսոր Շլիթան ընդունելու է հիւանդներին՝ ներքին և ջրային հիւանդութիւններով: Նրա հասցեն հետեւեալն է. «Пятигорскъ, профессоръ Шилтовъ, Верхній Бульваръ, домъ Ка-невскаго (Պետագորսկ, Կախուկու տուն, Վերին Բուլվար):»

ԱՂԱՍԱՖԱՅԻՑ մեզ գրում են: «Մարդկանց մի հոսանք անդադար գալիս է Պարսկաստանից, տարածվելով աշխարհի չորս կողմը չարչարվելու և ապրելու համար: Դրանք պարսկաստանցի թուրք մշակներ և ֆահաւս եր են: Այն նը շանաւոր բազմութիւնից, որ համարեա ամեն մի տարի սնցնում և այստեղից շատ չնչին վտրտաւանութիւն միմիայն յետ է դառնում դէպի հայրենիք: Թող և նիհար արարածներ են մեծ մասամբ, դիտեն բաւականաւոր շատ քիչ ապրուստով. օրական 5—10 կօպէկ բաւական է նրանցից իւրաքանչիւրին: Մեծ քաղաքների մէջ ապրում են նրանք ամենայնաւնջած փողոցներում, և ամենագարշի տեղերում: Վերին աստիճանի կեդոտութիւնը դրանց մէջ մի բնականաւոր և դարձեալ Վաստիկ ծոյլ և անընդունակ են. մի և նոյն ժամանակ ընդունակ միմիայն այնպիսի աշխատանքի, որ անանական ոյժից բարձր ոչինչ չէ պահանջում: Սաստիկ ֆանատիկներն են, թրիտոնեայի ձեռք տուածը չեն ուտի, նրանց «անմաքուր» համարելով: Հարեցողներ և խմիչք գործածողներ քիչ են պատահում զոցա մէջ. գիտեն «կարմիր» խաղաղ, բայց ոչ մեծամասնութիւնը. շատ անգամ «չայիլիսաններում» նրանք տանուլ են տալիս «դումպարին» իրանց օրական աշխատանքից աւելացած կօպէկները: Ոչ մի բանից համալին, ինչպէս անուանում են դրանց մեղանում, այնքան չէ վախենում, որքան համարեա թէ ամեն օր յայտնուող ճայիլներէր, որոնք պարսից հիւպատոսարանների կողմից ուղարկվում են ամեն կողմ անցադիրներ տալու եկողներին: Դրանցից շատերը դեսպանատան յանձնարարութիւնները ի չարն են գործ դնում:»

Ինչպէս յայտնի է, Անտոն Ղորղանեան և Սօֆիա Տէր-Մկրտչեան վաճառքի խնդիր ներկայացրին սենատին՝ Թիֆլիսի դատաստանական պալատի վճռի դէմ, որով իրանք դատապարտված են աքսորի: Սենատի մէջ յիշեալ խնդրի քննութիւնը, ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագիրները, նշանակված է մայիսի 30-ին:

Մի երկտասարդ հնադէտ, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, մտադիր է Պետերբուրգից Անդրկովկաս դալ, հնագիտական հետազոտութիւններ անելու դիտաւորութեամբ:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ

Ֆինանսների միւնիստրութիւնը ներկայացրել է պետական խորհրդին մի նախագիծ, որով առաջարկվում է մի քանի փոփոխութիւններ մտցնել սպիրտի արտահանման մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՐԿԻՆ ԱՆՏՐՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ՅՈՒՑՄՈՒՆԻՍՏՐԱՆ

Ազգայնական թշնամութիւնները Հաբսբուրգեան պետութեան մէջ չեն դադարում: Այդ թշնամութիւնը արդէն հրապարակապէս արտայայտվում է, և ինչպէս երևում է, հակառակ բանակները դուրս պէտք է թափեն իրանց սրտի վրա ծանրացած բոլոր զգացմունքները: Ազգայնական թշնամութիւնն այդ կողմը աւելի սաստիկ բնաւորութիւն է ստանում մանաւանդ այն պատճառով, որ թշնամական յարաբերութիւնները տիրապետում են Աւստրո-Ունգարիայի համարեա բոլոր ազգութիւնների մէջ. չենք կարող և գերմանացի մի մասնից ասում են, գերմանացիք և ռուսացիները միմեանց սիրելու միտք չունեն: Ճապֆէի միւնիստրութեան հայտեցուցիչ քաղաքականութիւնը, ինչպէս երևում է, անկարող պէտք է լինի վերջ տալ այդ ազգային կռիւներին, մանաւանդ վերջին դէպքերի մէջ միւնիստրութիւնը էլ չը կարողացաւ հաստատարել իր թշնամութիւն պահպանելու: Անցեալ անգամ արդէն հաղորդեցինք ընթերցողներին աւստրիական պատգամաւորների ժողովում գերմանացի պրօֆէսոր Մաննիի ասած ճառը, որը պաշտպանում էր չեխերի իրաւունքները, և որը ահալին աղմուկ գցեց գերմանական կուսակցութեան մէջ: Չեխերի դժգոհութեան համար էլի մի քանի նոր առիթներ հանդէս եկան, որոնցից նշանաւորն է այն, որ կառավարութիւնը արգելեց տօնել չեխերի ամբամարդակային մի ընկերութեան յօրեկանը: Այդ կառավարչական կարգադրութիւնը, որ մեծ ուրախութիւն պատճառեց գերմանացիներին, ահալին աղմուկ գցեց չեխերի մէջ: Կառավարութեան այդ սխալ քայլի դէմ բողոքեցին նոյն իսկ ամենապախաւոր լրագիրները ասելով՝ «այդպիսի մի կարգադրութիւն անելը քաղաքական մի մեծ սխալ է: Ճապֆէի միւնիստրութիւնը անկարող եղաւ դիմադրելու լեյկսաւոր գերմանացի անդամներին ճնշումներին և ձգտումներին: Շուտով այդ քաղաքական սխալի հետեւեալները հանդէս կը գան, որից ամեն մի չեխացի մարդ պէտք է միանգամայն զգուշանալ երեւոյթներից: Ազգայնական այդ թշնամական ձգտումները երկրորդ անգամ ներս թափանցեցին աւստրիական պատգամաւորների ժողովի մէջ: Նիւտերի ժամանակ միմեանց հակառակ ազգային կուսակցութիւնները շանթեր են արձակում միմեանց հասցէին: Այս անգամ չեխերի իրաւունքների պաշտպան հանդիսացաւ չեխ պատգամաւոր Չաչէկ, իր մի ողբերկած ճառով: Խօսելով գերմանացիները բոլոր անտանելի արարքների դէմ, Չաչէկ աւելացրեց հետեւեալ խօսքերը. «Նեթ Գերմանիայի երեւելի Շլիքեր և Գեօթէ կենդանի լինէին, եթէ յարութիւն առնէին այդ երեւելի հանձնարները՝ պէտք է կարմիրեն և ամաչէին, տեսնելով այն բոլորը, ինչ որ այժմ անում են իրանց եղբայր-գերմանացիները:» Այդ խօսքերը կայծակի պէս ազդեցին գերմանացի պատգամաւորների վրա, որոնք դժգոհութեան ցոյցեր անելով բողոք յայտնեցին այդ «չեխական լրբութեան» դէմ: Ժողովի մէջ սկսվեցաւ սաստիկ իրարանցում. աղմուկը անտանելի դարձաւ: Շատերը սպասում էին որ պատգամաւորների մէջ կը սկսվի կատարեալ կռիւ: Վերաւան մէջ հաւաքված հասարակութիւնը իր ծախաւարութիւններով, չլցեցով և անուշակեցումով մասնակցեց այդ ազգային փոթորիկին: Այդ խառնաշփոթութեան մէջ Չաչէկ էլի շարունակում էր իր ճառը: Նախագահը անկարող էր կարգ պահպանել: Չեխական կուսակցութիւնը համակրութեան ցոյցեր էր անում Չաչէկին: Ժողովի մէջ տեղի ունեցած այդ փոթորիկը՝ աւելի բուռն կերպով անցնում է հասարակական շրջանների մէջ, և այդպիսով հակառակ բոլոր խաղաղաւորական քաղաքականութեան՝ ազգայնական իրաւունքների և պատուի հարցը սկսում է զղրդեցնել բոլոր շրջանները:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Թիւրքաց կառավարութիւնը վաճառի համար նը-
շանակել է նոր կուսակալ, որը ապրիլի 14-ը
ներքին արդէն գնացել է իր նոր պաշտօնատեղին
վանս վան քաղաքի ժողովուրդը քաղաքական
հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տուեց նոր
կուսակալ խալիլ-փաշային Հայոց դպրոցների ա-
շակերտները երգելով դիմաւորեցին կուսակալին.
խոկ Սանդիստան օրիորդաց հայոց դպրոցի աշա-
կերտուհիները կուսակալի համար յատկացրած
բնակարանի մօտ դիմաւորեցին նրան: Կուսակալը
շնորհակալութիւն յայտնելով իրան ցոյց տուած
ընդունելութիւն համար, կայսերական ֆիւրման-
նի ընթերցումից յետոյ մի փոքրիկ բանախօսու-
թիւն արեց, այն միտքը յատնելով, որ նախնայի
կանոնաւոր կառավարութեան համար ինքը կա-
րօտ է տեղական ոյժերի և կարող անձանց ա-
շակցութեանը, որոնց հետ միանաւորու. ջանքերով
միայն կարելի է բարեփոխութիւն մտցնել երկրի
մէջ: Կուսակալը իր գաղափար մի քանի օր յետոյ
այցելեց տեղական հայոց առաջնորդարանը և
տեսակցութիւն ունեցաւ պատրիարքական փոխա-
նորդի հետ: Ինչպէս երևում է, վանի հայերի մի-
մասը բաւական յոյս ունի, որ նոր կուսակալը
իր բռնելով դիմելով և ուղղութեամբ վերջ կը դնի
այն մի շարք խառնակութիւններին և մասնու-
թիւններին, որոնց շնորհիւ վանի մէջ տիրապե-
տում է յուզումներ և թշնամական յարաբերու-
թիւններ: Արտասահմանի հայոց լրագրիները սպա-
սում են, որ խալիլ փաշան կարգադրացնի այդ
յոյսերը, քանի որ նա յայտնի է իբրև բուսակա-
նին կրթված մարդ, զիտէ եւրօպական քանի մի
ընդունել, և իր անցեալ գործունէութեամբ ցոյց
է տուել, որ ունի կառավարչական ընդունակու-
թիւն:

Հիւրընկերում մի գիւղ նորերումն ենթակիցեալ
աղէտի Սատիկ ձիւնի պատճառով Չարպ անու-
նով գետը, որ Տիգրիսի մի ձիւն է կաղմում,
յորդանաւով, ողորում է Ս ա դ ա անուանով գիւղը,
աները կործանվում են համարեա ամբողջապէս:
Գետի յորդանաւուց մնացել են և ուրիշ շատ
գիւղեր, որոնք գտնվում են գետի ափերում: Հա-
րաւարդաբար այդ բոլորը պատճառ է գիշեր
թամանակ, և բնակիչները անկարող են լինում
փախուստ տալ: Գետ ևս պաշտօնական կերպով
չէ հաշւած մնասի չափը, բայց կարծում են, որ
1,500-ից մինչև 2,000 մարդ զոհ են գնացել, և
600-ի չափ աներ բոլորովին աւերվել են: Վնասը
անապին է: Այդ աղէտի մանրամասնութիւնները
սարսափ են տարածել շրջակայ տեղերում: Օդ-
նութեան անապին կարծութիւն կայ: Վնասու-
նների անապին մեծամասնութիւնը նետաօդակներ
են:

Վանի պատրիարքական փոխնորդը հրաժարա-
կան է տուել իր պաշտօնից: Վանի խառն ժողո-
վը հեռագրով դիմել է Պոլսի, խնդրելով. չընդու-
նել առաջնորդի հրաժարականը, քանի որ նրա
ներկայութիւնը վանում շատ օգտակար է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ա. Պոլսից միջ գրում են հետեւեալը. «Մար-
գար անուանով անձը, որ երբեմն աղբային երես-
փոխան էր, դատաւարութեան 15 տարեկան տա-
ժանակիւր աշխատանքների, մեղադրվելով մի յոյ-
նի սպանութեան մէջ»:

—Ազգայնականացի հաղորդած տեղեկութիւննե-
րից երևում է, որ էմիրի ղօրքերը մի քանի մեծ
անյադողութիւնների հանդիպեցան, որոնք բաւա-
կան խախտել են էմիրի ապահովութիւնը:

—Ազգայնական նոր միջնորդութիւնը սկսել է
իր նախագծերի մասին հողայ, ապատամբու կու-
սակցութիւնը արդէն սկսել է յաղթութիւն տա-
նել. երդուեալները դատարանի մասին եղած
միջաբանութիւնները պատգամաւորների ժողո-
վում կատարեալ յաղթութիւն էր ազատամբու
կուսակցութեան համար:

—Պորտուգալացի ծովային միջնորդը հրաժա-
րական է տուել պաշտօնից այն պատճառով, որ
մի պատգամաւոր-սպայ նրա հետ փոքրիկ վեճ
ուռնեալուց յետոյ՝ ապտակ տուեց միջնորդին:
Պատգամաւորը ձերբակալված է:

—Վիեննայից գրում են, որ համալսարանի
մէջ ուսանողների ցոյցերը պրոֆէսոր Մանսֆի-
դէն աջնքան սուր կերպարանք են ստացել, որ
ժողովրդական լուսաւորութեան միջնորդութիւնը
մտադրվեցաւ իրական մի առեւտրական համալսա-

րանը: Բայց առ այժմ ձեռք են առնում միայն
մի քանի միջոցներ:

—Պետերբուրգից հեռագրում են լօնդօնի լրա-
գրիներին, որ մայիսի 12-ին Պետերբուրգում տե-
ղի ունեցաւ ազգայնական սահմանադիր ժողով:
յանձնաժողովի վերջին նիստը, բայց որովհետև
ուշինչ համաձայնութիւն չը կայացաւ, ուստի մը-
տադրութիւն կայ այդ դրոժը յանձնելու երկու
կառավարութիւնների վերահայեցողութեամբ:

—Սօֆիայից գրում են, որ աղբային ժողովի
գումարել է իր մի քիչ յետաձգելու մտադրութիւն
կայ:

—Ֆրանսիական բեղովիտային յանձնաժողովի
և Գորբէի միջնորդութեան մէջ ծագած տարա-
ձայնութիւնների պատճառով՝ Փարիզում նորից
սպասում են միջնորդական փոփոխութիւնների:

—Բոսնիայի և Հերցեգովինայի մասին ծագած
պաշտօնային և բանախօսութիւն քանի գնում,
այնքան էլ հետաքրքիր կերպարանք է ստանում:
Անկախած, աւստրիական միջնորդ Տիստայի ճա-
ռը, որի մասին հաղորդեց մեզ հեռագիրը ան-
ցեալ անգամ, նոր կերպարանք կը տայ այդ հար-
ցին, և զերմանական կիսապաշտօնական լրագրի-
ները ստիպված կը լինեն հանդէս բերել Բոսնիա-
կի քաղաքականութեան մի քանի գաղտնիքնե-
րը:

—Սօֆիայի կենտրոնական հայրենասէրների մի-
ութիւնը ստացել է կառավարութիւնից մեծ քա-
նակութեամբ դէմքեր և նիւթական միջոցներ:

—Բելգիայից գրում են, որ Նատալիա թագու-
հու հետաձգելուց յետոյ, միջնորդական գործերը
բոլորովին խաղաղ կերպարանք ստացան:

ԻՍՏԱՆ ԼՈՒՐԵՐ

Ահա թէ ինչպէս է ժողովուրդը շատ անգամ
արգելում իր սիրած հողերսկային հեռացնելու:
—Մայիսի 6-ից հեռագրում են Կիւտից, որ այն-
տեղի եպիսկոպոսը չը կարողացաւ դուրս գնալ
քաղաքից, թէ և նա, պապի հրամանի համաձայն,
պատրաստվել էր ճանապարհ ընկնելու դէպի Միւ-
խէն, որտեղ նշանակված էր պապի ներկայա-
ցուցիչ: Երբ կայսրիկոսը նստած էր լծած կառ-
քի մէջ, և պատրաստվում էր քաղաքից դուրս
գնալու, ժողովրդի անգին բազմութիւնը շրջա-
պատեց կառքը, յետ արեց ձիւնները, և ստիպեց
եպիսկոպոսին յետ դառնալու իր բնակարանը:
Իսկոյն և եթ քաղաքացիները հեռագիր ուղարկե-
ցին պապին՝ առաջարկելով չը հեռացնել իրան-
ցից եպիսկոպոսին:

Նորերումս իօնի դատարաններից մէկում քըն-
նելում էր մի երիտասարդ կնոջ նորածն գործ-
ութեան գործը: Մի քանի ժամանակ անդադար յա-
ճախում էր լինել եկեղեցիները մի երիտասարդ,
գեղեցիկ կին խոստովանելու համար: Խոստովան-
վելով և արտաստեղծելով իր մեղքերը պատմելով խոս-
տովանալը քանակային, գեղեցիկ կնոջ իր խոս-
տովանութիւնը վերջացում էր հետեւեալ խօսքերով:
«Նա հարուստ լի աղջիկն էր, թողեցի հայրական
տունս, և գնացի այն մարդու յետեւից, որը երդ-
վեցաւ ինձ միշտ սիրել: Բայց այդ մարդը ինձ
խաբէր, և այստեղ լիօն բերելով ինձ թողեց
անպաշտպան. ես հայր կարօտ եմ: Յոյս ունեմ,
որ, տէր-հայր, մեղքերիս թողութեան համար ձեր
սուրբ աղօթքների հետ կը միացնե՞ք և մի քանի
կօպէկ, որպէս դի ես միջոց ունենամ տուն վը-
րադառնալու: Սուրբ հայրերը յաղթած գ եղ ե-
ցի ի կնոջ խնդրից, տալով էին տաս-
նեակ ֆրանկներ... Քանաններըց մէկը միան-
գամայն մոռանալով, որ խոստովանութիւնը
պէտք է ծածուկ պահել, սկսեց հետաքրքրվել գե-
ղեցիկ կնոջ անձնատուրութեամբ... և դուրս եկաւ
որ լի աղջիկը բոլորովին անից չէ փախել...
բանից երեւցաւ, որ խոստովանողը կարի խա-
նութի մէջ աշխատող մի կին է... որ բաժան-
ված է եղել մարդուց:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

ՄՈՆՍ, 11 մայիս: Բօրինաբում գործադուլը
ընդհանուր է դարձել: Գործադուլին մասնակցում
են 13,000 բանուորներ:

ԱՅԻՆԻ, 11 մայիս: Կրիտիկ աղգաբնակու-
թիւնը յուզված է թիւրքաց ղօրքերի կողմ և լրա-
գրուց: Քրիստոնեաները ընդամենը չեն լինում,
սպանելով Բ. Գրան լեճին՝ աղբային ժողովի մէջ
ձեռակերպված պահանջների վերաբերմամբ:

ԲԵՐԼԻՆ, 11 մայիս: «Բելգիայից» և Մէն-
դէլստի» առևտրական տունը և բանկը առա-
ջարկեցին բոքսայի ներկայացուցիչներին ընդու-
նել Բերլինի բօքսայում վերջին հուշանշանները
փոխառութեան գնահատութիւնը:

ՍՈՖԻԱ, 11 մայիս: Բ. Գրուր ուղարկեց իր

արտասահմանեան դեսպաններին մի շրջաբերա-
կան, որով հրաւիրում է եւրօպական կարենտնե-
րին փոխանակել իրանց կարծիքները բօքսայական
ծուներ առաջարկելու մասին, քանի որ այդ մա-
սին յատկապէս խնդրում է բօքսայական ժամա-
նակաւոր կառավարութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մայիս: Թագաւոր Կայսրը
բիշ համարելով աջ 90,000 ռուբլին, որ տըր-
վում է վերաւորեալների համար կազմված Ա-
լեքսանդրեան մասնաժողովին, Բարձրագոյն հրա-
մայել բարեհաճեց, որ տարեկան տրվի էլի 30
հազար ռուբլի, այն պայմանով, որ այդ փողերը
ծախսվեն բացառապէս իրեն թողակ հեծելազոր-
քին պատկանողների համար:—Երկր և. Կիւրիլի
Մեթօդի յիշատակի օրը, Կազանի տաճարում
մատուցվեցաւ հանդիսաւոր պատարագ, ներկայու-
թեամբ «Սլավեան» ընկերութեան անդամների, և
Պետերբուրգում ապրող սերբերի և բօքսայների:
Ժամերգութեանց յետոյ, պրոֆէսոր քանանայ
Բօքսայումիսի մի ճառ ասեց, որի մէջ մատնա-
ցոյց արեց այն տխուր երեւոյթի վրա, որ սլավոն-
ները մէջ տիրապետում է պառակտում, որը
վերջին ժամանակները տարածվում է մինչև ան-
գամ այն սլավոն աղբերի մէջ, որոնք առանձնա-
պէս թանգ են Ռուսաստանի համար: Իր ճա-
ռի վերջում քարոզիչը ցանկութիւն յայտնեց, որ
բոլոր սլավոնները միանան Ս. Կիրիլի և Մեթօ-
դի խաչվառի ներքոյ:—Գօլտօր Ֆիւն Նշանակ-
ված է ֆինլանդների միջնորդութեան մէջ առաւ-
ձին յանձնարարութիւնների աստիճանաւոր:—
«Journal de St. Petersburg» ասում է, որ Տիս-
տայի բացատրութիւնները Բոսնիայի հարցի և
Բերլինի կոնդրեւ վերաբերութեամբ, այնպիսի
կերպարանք չունեն, որ ստիպէին իրան, լրագրին,
հրաժարվելու այն չափաւորութիւնից, որով միշտ
ղեկավարվել է այդ հարցերի մէջ: Լրագիրը ցա-
ւում է միայն, որ բանակցութիւնները դանաղան
Ֆաղիաների վրա դատաւիճի կարգաւոր ժամանա-
կը չէ դեռ, այնու ամենայնիւ հարկաւոր է հա-
մարում, պարլամենտական և ընտրողական հայե-
ցակէտերով, ներկայացնել այնպիսի բացատրու-
թիւններ, որոնք լրակատար չեն և ոչ էլ անկող-
մնապահ: Լրագիրը չէ կամենում հետեւել Տիստայի
օրինակին, և բաւականանում է կրկնելով օրերումս
իր յայտնած այն յոյսը, որ կարենանները կը
շարունակեն հետեւել առաջվայ այն ուղղութեանը,
որը պահանջում է համաձայնութեան և խաղաղու-
թեան ընդհանուր կարգը:—«Новое Время» լրա-
գիրը րեւել է, որ Բեռլինում Վիլհելմ, հիւանդու-
թեան պատճառով, հրաժարվեցաւ «Известія
Славянского благотворительного Общества»
թերթի խմբագրելուց, և որ ընկերութեան խոր-
հուրդը միջնորդել է ուր հարկն է, որ պրոֆէսոր
Լամանսկի հաստատվի յիշեալ թերթի խմբագրի
պաշտօնի մէջ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մայիս: Հրատարակված է
սենսաշուն տուած ու կ ա դ ը, որը վերաբերում է
օտարահպատակների սեփականութիւն ձեռք բե-
րելուն, կամ ժամանակաւոր տիրապետութեան և
անշարժ կալուածներով օգտվելուն արևմտեան
մի քանի նահանգների մէջ: Լեհական թագաւո-
րութեան տաճն նահանգներում, այլ և Բեռաբա-
բիայի, Վիենայի, Վիտեբսկի, Վոլինի, Գրոշնո-
յի, Կիւրիլի, Կովնայի, Կուրլանդիայի, Լիթւանի-
դիայի, Միսկի և Պօդոլսկի նահանգներում, օ-
տարահպատակները նաւահանգստային և ուրիշ
քաղաքային բնակատեղիներից դուրս՝ չեն կարող
ձեռք բերել անշարժ կալուածներ. և մասնաւո-
րապէս լեհական թագաւորութեան նահանգնե-
րում օտարահպատակներին արգելվում է կառա-
վարել կալուածներ իրեն հաւատարմատար կամ
կառավարիչ՝ քաղաքային բնակատեղիից դուրս:
Օտարահպատակներ իրաւունքների սահմանափա-
կելը չէ տարածվում այն դէպքերի վրա, երբ
վարձում են տներ, բնակարաններ կամ ամառա-
նոցներ: Ժառանգութիւն ստանալ՝ ժառանգների
ուղիղ գծի և ամուսնիների մէջ թող է տրվում
եղած հիմունքների համաձայն, ինքէ միայն ժա-
ռանգը բնակութիւն է հաստատել Ռուսաստանում
մինչև այս ուղիղի հրատարակելը:

ԲԵՐԼԻՆ, 12 մայիս: Այստեղի բօքսայում
թող է տրված առաջ չորս պրօֆէսորական փո-
խառութեան գնահատութիւնը:

ՓԱՐԻՉ, 12 մայիս: Միջնորդական ճգնաժամը
դեռ շարունակվում է, հետևանքը դեռ անորոշ է:
Լուրեր են տարածված, որ Գրեյվի պահանջում է
հեռացնել Բուլանթէին, այդ բանը քաղաքում ա-
ռաջ է բերել մեծ յուզումներ, սպաւորութիւն թո-
ղեց նոյնպէս և այն դէպքը, որ Բուլանթէ Կէ-

մանային տարաւ մինչև ժողովի բնակարանը իր
սեփական կառքով: Խօսում են նոյնպէս և Գրեյվի
մօտաւորտ հրաժարականի մասին: Ֆրէսինէյ
հետ նոր կազմակերպութիւն առաջ բերելը չը
յաջողվեցաւ: Այսօր առաւօտ Գրեյվի հրաւիրեց իր
մօտ ժողովի նախագահ՝ Ֆրէսինէյ և հաղորդեց նը-
րան, որ բոլոր ձեռակերպութիւնները չը յաջող-
վեցան, և դիմելով Ֆրէսինէյ հայրենասիրական
զգացմունքներին, խնդրեց նրան յանձն առնել
նոր միջնորդութեան կազմելը: Ֆրէսինէյ պահանջեց
24 ժամ միջոց՝ այդ մասին մտածելու համար:

ԱՅԻՆԻ, 12 մայիս: Կրիտիկ վրա գործերը
գրութիւնը փոխվեցաւ. Բ. Գրուր հրաժարվում է
կատարել աղբային ժողովի ցանկութիւնները:
Նահանգապետը սպառնում է պաշարման գրու-
թիւն առաջ բերել այն դէպքում, եթէ քրիստո-
նեաները կը անդէն իրանց հրաժարականի վրա
մասնակցելու ժողովի նիստերին: Այդ սպառնա-
լիքը աղբեցութիւն չունեցաւ. քրիստոնեաները
պատրաստվում են դիմադրելու:

ՓԱՐԻՉ, 13 մայիս: Ատում են, որ նոր միջնո-
րութիւնը կազմակերպվելու է մասնակցութեամբ
Ֆրէսինէյ, որը գուցէ կը լինի ներքին գործերի մի-
ջնորդ, և Ֆրէսինէյ, որը կը մնայ արտաքին
գործերի միջնորդի պաշտօնի մէջ: Կը հրաւիրվի
արդեօք նոր միջնորդութեան մէջ Բուլանթէ, թէ
ոչ:—առաջով յայտնի չէ:

ԲԵՐԼԻՆ, 13 մայիս: Գարաժիի հանքերի
մէջ բանուորների գործադուլը՝ Գարաժիայի մօտ
տարածվում է. դանադան տեղերում երեւցան
100 և 400 մարդկերանցից կազմված խմբեր՝
կարմիր դրօշակներով, բայց դրանք հաւանքեցան
զօրքերի և ժանդարմների կողմից:

ՍՈՖԻԱ, 13 մայիս: Համայնքների ժողովի
նիստերը յետաձգված են մինչև յունիսի 6-ը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 11-ին

Ռուսաց 1 ռուբլ	Լոնդոնի վրա արժէ	211 ¹ / ₁₆	պէնտ.
—	Համբուրգի վրա	184 ³ / ₈	պֆ.
—	Փարիզի վրա	227 ³ / ₄	սան.
Ուկր.	արժէ	9	15 Կ.
Մարսայի կուպոններ	—	176	>
Արծաթ	—	1	> 33
Բօրսայի դիվիդենդներ	—	41 ¹ / ₈	> 6%
Պետակ. բանկ. 5%	տոմս 1-ին շրջանի	99	> 87
—	—	2-րդ	> 99
—	—	3-րդ	> 99
—	—	4-րդ	> 99
—	—	5-րդ	> 99
—	—	6-րդ	> 99

Արեւելեան 5%	փոխառութ. 1-ին շրջ.	99	> 75
—	—	2-րդ	> 100
—	—	3-րդ	> 100
Ներքին 5%	առաջին փոխառութ.	265	>
—	երկրորդ	243	> 25
5 ¹ / ₂ %	բէնտա	102	> 37
Ուկրեյն բէնտա		195	>
Եթովպիոյ կօնսոլիդաւ փոխառու-			
թիւն		165	> 25
Նոր երկաթուղային բէնտա		—	>
5%	գրաւական թղթեր կալուած.		
—	փոխ. կրեդ. բնկ.	168	> 25
—	Գրաւ. թղ. Անլ. բանկի	98	> 87
5 ¹ / ₂ %	գրաւական թղթերի խնամուծի		
—	կալուած. բանկի	98	> 87
6%	գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	102	> 75
—	—	102	> 25
—	—	101	> 75
—	—	101	> 75
—	—	102	> 50
—	—	101	> 50
—	—	101	> 75
—	—	101	> 62
—	—	27	> 43
—	—	18	> 43

Վոլյա. կրեդ. բնկ.	168	>	28
Գրաւ. թղ. Անդու. բանկի	98	>	8
51/2% զրաւաւոր թղթեր Խերսոնի կալուած. բանկի.	98	>	8
6% զրաւաւ. թղ. Խարկովի կալ. բան.	102	>	7
— Պոլտաւայի —	102	>	2
— Պետ. Զուկայ. —	101	>	7
— Կիեւի —	101	>	7
— Մոսկուայի —	102	>	5
— Բենարաբ. Զաւլր. —	101	>	5
— Նիժ. Սամար. —	101	>	7
— Վլադիպլի —	101	>	6
— Ռիֆլիսի—27 և 43 տ. —	—	>	—
— Զուլայիսի—18 և 43 տ. —	—	>	—

